ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2017 թվականի N 136 - Ն

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել երկրորդային հումքի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման կիրառության իմաստով երկրորդային հումք են համարվում «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտադրության և սպառման թափոններ համարվող՝ սույն որոշման հավելվածի ցանկում ներառված ապրանքները, այդ թվում՝ արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքը, նյութերը, արգասիքները և այլ արտադրանքի մնացորդներն ու սկզբնական սպառողական հատկությունները կորցրած արտադրանքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 20
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
փետրվարի 16-ի N 136 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ

1. Թղթի և ստվարաթղթի թափոններ

2. Գունավոր ու սև մետաղների ջարդոն և թափոններ

3. Պոլիմերային նյութերի թափոններ

4. Ապակու և ապակյա իրերի ջարդոն ու թափոններ, այդ թվում՝ գործածության մեջ եղած ապակյա տարաներ

5. Տեքստիլ թափոններ

6. Հանքային և սինթետիկ յուղերի թափոններ

7. Ռեսուրսը սպառած էլեկտրական մարտկոցներ

8. Էլեկտրատեխնիկան և էլեկտրոնային սարքավորումների ու դրանց մասերի ջարդոն և թափոններ

9. Շինարարական թափոններ

10. Փայտանյութի թափոններ

11. Ռետինե թափոններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ